«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	**4. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում**
ԱՌԱՐԿԱ	----------ՆԶՊ----------
ՀԵՂԻՆԱԿ	----------Սամվել--Խաչատրյան----------
ՄԱՐԶ	----------Շիրակ----------
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	----------«Ֆոտոն»--վարժարան----------

Բովանդակություն

Նախաբան 3

Ներածություն 3

Հետազոտության նպատակը և խնդիրները 3

Հետազոտության մեթոդներ 3

Հետազոտության հարցերը 4

Հետազոտության առանցքային արդյունքները 4

«Արժեհամակարգ» հասկացությունն ու ձևավորման գործոնները 5

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը 8

Եզրակացություն և առաջարկություններ 19

Օգտագործված գրականության ցանկ 20

Թեմա՝ 4.

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

<u>Նախաբան</u>

Սույն աշխատությունն իրականացվել է «Ֆոտոն» վարժարանի ՆԶՊ ուսուցիչ, պահեստազորի փոխգնդապետ՝ Սամվել Խաչատրյանի կողմից 2022թ. փետրվար-հունիս ամիսների ընթացքում «Ֆոտոն» վարժարանի 7-11-րդ դասարաններում:

Ուսումնասիրության մեջ քանակական և որակական մեթոդներով ուսումնասիրված են աշակերտների մասնագիտական ուսուցման և կրթության բովանդակության հիմնախնդիրները: Հետազոտության մեջ վերհանված են հիմնախնդիրներին առնչվող ենթահարցերը և ներկայացված են դրանց վերաբերյալ Հայաստանում առկա իրավիճակը՝ նորմատիվային դաշտի, աշակերտների, ուսուցիչների, վարժարանի տնօրենի, գործընկեր-փորձագետների տեսանկյունից: Ծրագրի հեղինակը շնորհակալություն է հայտնում հետազոտությանը մասնակցած վարժարանի տնօրենին ու գործընկեր-փորձագետներին և ուսուցիչներին, բոլոր աշակերտներին ու նրանց ծնողներին՝ իրենց արժեքավոր տեսակետների և գնահատականների համար:

<u>Ներածություն.</u> Հայաստանի հանրակրթության ոլորտի վերջին տարիների բարեփոխումներում առանցքային տեղ են գրավում ՆԶՊ ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության ոլորտի բարեփոխումները: Ըստ կրթության բովանդակության ձևավորված չափորոշչային համակարգի՝ մշակվում են հանրակրթության աստիճաններին (տարրական, միջին և ավագ) և դասավանդվող առարկաներին ներկայացվող արդյունքները: Ուսումնական ռեսուրսների ու դասա-վանդման նպատակն այդ արդյունքներն ապահովելն է:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները.</u>

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՆԶՊ առարկան, յուրաքանչյուր աշակերտի համար, անձնային նշանակություն դարձնելու հնարավորության երեք առանցքային բաղադրիչների՝ ծնողների շահադրդման (մոտիվացիայի), ուսուցիչների առաջնորդության և հանրակրթության բովանդակության խնդիրները՝ հանրակրթության ներկա արդյունքների համատեքստում:

<u>Հետազոտության մեթոդները.</u>

Իբրև **որակական հետազոտության** մեթոդներ ընտրվել են խորացված հարցազրույցը և ֆոկուսխմբային քննարկումների մեթոդները: **Քանակական հետազոտութ-**

յունն իրականացվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդով: Ուսումնասիրվել են նաև թեմային վերաբերող նորմատիվային փաստաթղթերը, հետազոտությունները և տեղական ու միջազգային հրապարակումները: Անցկացվել է հարցում վարժարանի 9-րդ և 12-րդ դասարանների 120 աշակերտների շրջանում: 9-րդ և 12-րդ դասարանների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք միջին դպրոցի և ավագ դպրոցի վերջին աստիճաններն են և այդ դասարանների աշակերտներն առավել ամբողջական կարող են գնահատել ՆԶՊ ուսուցման վիճակը: Հարցում է անցկացվել վարժարանի 21 ուսուցիչների և տնօրեն-փոխտնօրենների շրջանում: Անցկացվել է խորացված հարցազրույց կրթության ոլորտի 10 փորձագետ-ների (այլ դպրոցների 2 զինղեկ, ՇՊՀ ՆԶՊ, պատմաաշխարհագրական, ֆիզմաթ ամբիոններից 3 (մեկական) դասախոս, զինկոմի 2-րդ բաժնից 1 աշխատակից և զինծառայության մեջ գտնվող 4 ծնող) շրջանում, որոնք ներկայացնում են պետական համակարգը, դպրոցները և բուհերը: Բոլոր օղակներում անցկացվել են մեկական ֆոկուս խմբեր ուսուցիչների, ծնողների և վարչական աշխատակազմի մասնակցությամբ (յուրաքանչյուրին մասնակցել է 5-7 հոգի):

<u>Հետազոտության հարցերը.</u>

Հետազոտության մեջ քննարկվել են հետևյալ հարցերը. Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության

- նորագույն ցուցանիշները,
- առանցքային խնդիրները,
- ուսուցիչների աշխատանքային ծանրաբեռնվածությունը,
- մասնագիտական զարգացումը,
- կրթության բովանդակության մշակումը,
- դասագրքերի խնդիրը,
- տեղեկատվական տեխնոլոգիաները որպես կրթության բովանդակության բաղադրիչ:

<u>Հետազոտության առանցքային արդյունքները:</u>

1. Կրթության զարգացման պետական ծրագրի որոշ դրույթներ չեն կատարվում:
2. Ուսուցիչների աշխատանքի ընդունման գործընթացը թափանցիկ է. մամուլում տպագրվում է հայտարարություն և անցկացվում մրցույթ: Սակայն չկա քաղաքականություն մանկավարժական բուհերի լավագույն շրջանավարտներին դպրոցներում աշխատանքով ապահովելու ուղղությամբ: Աշխատանքի ընդունման գրավոր և բանավոր <u>թեստային համակարգերը հնարավորություն չեն տալիս պարզել, թե ինչ-</u>

պես են թեկնածուները աշխատում երեխաների հետ, ինչպես են կիրառում իրենց գիտելիքները:

3. Հետազոտության մասնակիցները հավաստում են, որ չկա հավաստիացում այն բանի, որ կրթական համակարգը շարժվում է որոշակի նպատակի իրագործման ուղղությամբ: Համակարգում չկան սահմանված առաջնահերթություններ, որոնց վրա կենտրոնացումը կբերի ամբողջ համակարգի բարելավմանը:
4. Գիտելիքների ստուգման միջոցները (կիսամյակային ամփոփիչ գրավորներ, քննություններ) հիմնվում են միայն չափելի գիտելիքների ստուգման վրա: Այսինքն, մենք ստուգում ենք ոչ թե կարևոր գիտելիքների կամ արժեքների ճանաչումն ու յուրացումը, այլ՝ այն գիտելիքների, որոնք չափելի են:

Ներկայումս անհատի շահադրդման (մոտիվացիայի) ոլորտի զարգացումն հանդիսանում է բազմակողմանի ուսումնասիրության առարկա: Ընդ որում մեծ ուշադրություն է դարձվում արժեքային կողմնորոշիչների զարգացմանը՝ որպես անհատի, ներկա վարքագիծն ու ապագան կողմնորոշող (մոտիվացնող/շահադրդող), հոգեկերտվածքի (մենտալիտետ) ձևավորման կարևորագույն տարր:

Գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարքը խարխլված է, իսկ արժեքները խեղաթյուրված, շատ շրջանավարտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն վարքի բարոյական մոտիվների իսկական արժեքի մասին, չեն գիտակցում դրանց դերը իրենց ուղին ընտրելիս, մեծամասամբ նյութապաշտ են:

Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

Արդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրաքանչյուր ուսուցչի, այդ թվում նաև ՆԶՊ ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

«Արժեհամակարգ» հասկացությունն ու ձևավորման գործոնները

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհա-

մակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով՝ չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է ՆԶՊ առարկայի դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի լեզվի, պատմության ու աշխարհագրության, և հայրենասիրությանն առնչակից մյուս բոլոր առարկաների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների

միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» [3, 22]: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» [3, 64]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցու-

թյուն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև, ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունի նախնական զինվորական պատրաստությունը, ինչպես՝ գործնական հմտությունների ձևավորման, այնպես էլ տեսական՝ ճանաչողական ու իմացական գիտելիքների առումով, որով ստեղծված/կուտակված, ազգային ու համաշխարհային նշանակության նվաճումների հետ ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ՆԶՊ առարկայի դասավանդումը դուրս է գալիս սոսկ ռազմական գործ և զինվորական մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների հայրենասիրական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել:

Հայկական թագավորությունները շատ հաճախ ազատության և անկախության համար պայքար են մղել Պարսկաստանի և Հռոմի դեմ: 7-րդ դարի մուսուլմանական արշավանքներից սկսած մինչև 15-րդ դարը, լինելով այլ կայսրությունների գերիշխանության ներքո, այնուամենայնիվ, թեկուզ և ընդմիջումներով, ունեցել ենք, ռազմական անկախության որոշակի ժամանակաշրջաններ. դրանք *Բագրատունյաց հարստության* և Հայկա-

կան լեռնաշխարհի սահմաններից դուրս գտնվող *Կիլիկյան արքայատոհմերի* կառավարման ժամանակներն են:

Հարևան պետություններից յուրաքանչյուրը միշտ էլ փորձել է Հայաստանի հաշվին ընդարձակել իր տարածքները: Բազմաթիվ հայեր դարեր շարունակ մարտական ծառայություն են իրականացրել օսմանյան և պարսկական բանակներում: Հայ զորականների անհամբելի սխրագործությունները, ունեցած ու կորցրած տարածքների նկարագիրը փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք երկրի ոգին, հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, ինչը հարստացնում է սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Համամիտ եմ որոշ գործընկերներիս այն մտքին, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը հայրենի մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակ: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ՆԶՊ դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, օրինակ դասանյութի ուսուցումը, իրականացնել այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով:

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի մոտ: Յուրաքանչյուր մարդ, ուսուցիչ ունի մի որոշակի հերոս կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ. ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիա-րակչական կամ արժեքային և

ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» [5, 59]:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, արշավ, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը՝ դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [6, 65]:

Անհատի կողմնորոշիչ արժեհամակարգը ինչ-որ բանով բացարձակ կարգավորված և անշարժ բան չէ, այն հակասական է և դինամիկ փոփոխվող, արտացոլում է՝ ինչպես աշխարհի հետ անհատի փոխկախվածության գլխավոր, էական փոփոխությունները, այնպես էլ ընթացիկ, կենսական, որոշակի չափով պատահական իրավիճակների փոփո-

խությունը: Դիտարկելով արժեքային կողմնորոշիչները, խորհրդային ականավոր հոգեբան Ա.Ն. Լեոնտևը նշել է, որ «... սա առաջատար շարժառիթ է ... նման կենսական դրդապատճառներն ունակ են գոյության ներքին հոգեբանական հիմնավորում ստեղծել, որը կյանքի իմաստն է կազմում» [2, էջ՝ 126]: Հոգեբանական և մանկավարժական հետազոտություններում ուսումնասիրվում են ուսումնական գործընթացում անհատի արժեքային կողմնորոշիչների կառուցվածքը, դրանց դինամիկան և ձևավորման պայմանները: Հետազոտվում են արժեքային կողմնորոշիչների դերը վարքագծի սոցիալական կարգավորման մեխանիզմում, նրանց փոխկապակցությունները անհատի յուրահատկությունների հետ և այլն: Ժամանակակից մանկավարժական հետազոտությունները ցույց են տվել, որ դպրոցականների արժեքային կողմնորոշիչների ձևավորման և զարգացման գործում կարևոր դերը պատկանում է կրթական միջավայրին [3, 10]:

Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել դպրոցական միջին տարիքին (10/11–12/13 տարեկան, այսինքն՝ 5-7 դասարան) առնչվող սովորողների արժեքային կողմնորոշիչների վերաբերյալ հարցերի ուսումնասիրությանը: Ինչո՞ւ: Դպրոցական միջին տարիքում որոշակիացվում են շրջապատողների հետ անհատի փոխհարաբերությունների առանձնահատկությունները, որոնք ազդում են դրանց ձևավորման և զարգացման վրա, անհատի գործողություններում ձևավորվում է նորմերի ու կանոնների, վարքագծի ձևերի ամբողջությունը: Դպրոցականների արժեքային կողմնորոշիչների ձևավորման կրթական փուլի այս գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում «Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության» (ՆԶՊ) դասընթացը [4, 5]:

ՆԶՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձևավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ:

ՆԶՊ դասընթացի նշանակությունը սովորողների անհատական մոտիվացիոն ոլորտի ձևավորման և զարգացման գործում պայմանավորված է, ամենից առաջ, անվտանգության խնդիրների արդիականությամբ և առօրյա կյանքում դրանց ապահովմամբ: Կենսագործունեության անվտանգության հիմնախնդիրն՝ իր ժամանակակից արտա-

հայտմամբ, առաջացել է մարդու կողմից շրջակա միջավայրը փոխակերպելու տեխնոլոգիաների հզորության աճի հետ կապված: Ավելի ու ավելի հզոր տեխնոլոգիաների փոխակերպման զարգացումն ու կիրառումը խթանվում է մարդու անվտանգության հիմնական կարիքներով: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, շրջակա միջավայրի հետ փոխազդեցությունից առաջացած սկզբնական վտանգների դեմ պայքարելու համար մարդու տրանսֆորմացիոն գործունեությունը նույնպես պոտենցիալ վտանգավոր է. սկզբնական վտանգների վերացումը անխուսափելիորեն հանգեցնում է նոր, երկրորդական վտանգների առաջացմանը, հիմա արդեն վերափոխվածների հետ փոխազդեցությունից: Սրա հետևանքով միշտ եղել են անվտանգության երկու տեսակի հարցեր. անվտանգություն՝ շրջակա միջավայրից և անվտանգություն՝ սեփական գործողություններից: Մինչ այժմ բացահայտված են, մարդկային կենսագործունեությունից առաջացած, գլոբալ սպառնալիքների մի ամբողջ շարք: Նույնիսկ նախկինում անվտանգ (սահմանափակ օգտագործմամբ) արդյունաբերական և գյուղատնտեսական տեխնոլոգիաների օգտագործումը, աստիճանաբար փոխակերպելով բնական միջավայրը, բայց միևնույն ժամանակ ամենուր ոչնչացնելով բնական էկոհամակարգերը, սկսել է սպառնալ համաշխարհային աղետով: Անվտանգության և հարմարավետության մակարդակը բարձրացնելու համար ի սկզբանե նախագծված տեխնոլոգիաների ստեղծումն ու կիրառումը հանգեցրել են ինչպես բնական և սոցիալական աղետների «անտեսանելի» (առայժմ) սպառնալիքների առաջացմանը, այնպես էլ, ժամանակակից մարդու առօրյա կյանքում, տեխնիկական համակարգերի սպառնացող վթարների և վտանգավոր իրավիճակների թվի ակնհայտ աճին: Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող նոր վտանգներն ու սպառնալիքները սրվում են Երկրի բնակչության աճով և հասարակության գիտակցության դեֆորմացմամբ. սպառողական գաղափարախոսության գերակայությունը հաստատվում է ի վնաս մարդկության գոյությունն ու զարգացումն ապահովող բարոյահոգեբանական արժեքների և բարոյական սկզբունքների: Ընդհանուր արդյունքում ձևավորվել է անվտանգության ապահովման փոխկապակցված խնդիրների նոր փաթեթ, որը դարձել է կենսագործունեության անվտանգության ժամանակակից բարդ հիմնախնդիր: Սրա հետ կապված՝ կենսագործունեության անվտանգության ոլորտում կրթությունը համարվում է ժամանակակից դպրոցի զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) սահմանված ծրագրային նպատակների իրագործման անհրաժեշտությամբ և աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված ՆԶՊ ա-

առարկայի դասավանդումն ու այն ազգային արժեհամակարգի ամրապնդման ու զարգացման հենքի վրա կառուցելը պարտադիր անհրաժեշտություն է:

«Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի 8-12-րդ դասարանների չափորոշչում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում տեղի ունեցած զարգացումներով, համաշխարհային և տարածաշրջանային իրավիճակով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությամբ՝ անհատականից դեպի խմբային (ջոկային) պատրաստվածություն: Կարևորվում է ջոկի անդամների փոխգործողությունը:

Իրականացված հետազոտության արդյունքում կարևորվում են և ***դաշտային (ճամբարային) պարապմունքները***, որոնք հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթացը, ապահովել ինչպես պահանջվող գործողությունների դիտակտիկան, այնպես էլ սովորողների, գործնական վարժանքներով թեմայի յուրացումը:

Բացի երկարաժամկետ ճամբարային փորձաշրջանից, դաշտային պարապմունքները նպատակահարմար է կազմակերպել շաբաթ կամ կիրակի օրերին՝ ընտանիք-դպրոց փոխհամագործակցության գործադրմամբ: Ճամբարային պայմանները լայն հնարավորություններ են ընձեռում պարապմունքների ինչպես ցերեկային, այնպես էլ երեկոյան ժամերին անցկացմանը, առանձին թեմաների գործնական ուսուցմանը (աստղերով կողմնորոշվելը, գիշերային տեղաշարժերը, պահակային ծառայության իրականացումը, դիրքերի, կրակատեղի պատրաստումն ու քողարկման հնարքները և այլն): Ճամբարային պատրաստության և ռազմամարզական խաղերի ընթացքում կարող են լուծվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են տեսական գիտելիքների փորձնական ստուգումն ու ամրապնդումը՝ բնական միջավայրում, անհատական և խմբային վարժանքներով՝ հմտությունների և կարողությունների զարգացումը, իրավիճակների մոդելավորում և իրական պայմաններում սովորողների խմբային համագործակցության զարգացում, հոգեբանական կայունության ապահովում, <u>սեփական ունակությունները ճանաչելու և ինքնադրսևորվելու հնարավորություն</u>:

Այս ամենը՝ թե՛ տղաների, թե՛ աղջիկների անվերապահ ընդգրկմամբ, քանզի ՆԶՊ առարկայի ուսուցումը հավասարապես նախատեսված է թե՛ մեկի, թե՛ մյուսի համար. այն սահմանում է հանրակրթության հիմնական կրթական ծրագրի յուրացման արդյունքների պահանջները՝ առարկայական և անհատական:

Ասվածի հիմքում, վարժարանում արդեն 7-րդ ուսումնական տարին անցկացվող, 2014-2015 ուստարվանից սկսած, ռազմահայրենասիրական «Սխրանք» և «Մենք քաջազուն հետնորդներն ենք» ուրույն խաղ-ծրագրերի հատվածային իրագործումներն են. որոնց ոչ միայն տեղյակ, այլև մասնակից են եղել նախկինում իրենց ավագ զավակների մասնակցությունը զորացրած, այսօր իրենց կրտսեր երեխաներին հաստատություն բերող շատ ծնողներ, կազմակերպչական ու գործառնական աշխատանքներում հմտացած առանձին առարկաների ուսուցիչներ:

Գյումրու «Ֆոտոն» վարժարանի քաղաքացիական ու զինվորական կրթական ամենահնարավոր առնչակցության կառույցների (ՇՊՀ, զինկոմիսարիատ ու զորամասեր, ՍՊԸ, ԱԶ ու ՀԿ-ներ) հետ համագործակցության ու ձեռքբերումների տարիներով ձևավորված փորձառությունը իր մեջ ունի ոչ միայն մեր ու քաղաքի, այլև մարզի կամ տարածաշրջանի, թե պահանջվի, և հանրապետական ընդգրկմամբ՝ գործադրության պատրաստ ունենք թե՛ հիմնական, թե՛ ավագ դպրոցների սովորողների, նաև համահավաք աշակերտակազմի ռազմամարզական ճամբարի, ՆԶՊ առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրի գործնական և կիրառական մասը կազմող ու ներկայացնող կարգն ու ծրագիրը: Նրանում առկա հենց միայն զորամասեր այցելությունը սովորողներին, բանակային առօրյային անմիջականորեն ծանոթանալու հնարավորություն է ընձեռում, մարտական տեխնիկային, սպառազինության տեսակներին և անձնակազմի մարտական պարապմունքներին՝ նմանապես:

Բոլորը գիտեն՝ վարժարանում զինվորական պատրաստության ու անվտանգ կենսագործունեության ուսուցումը ՆԶՊ դասերով չի ավարտվում: Ունենք արտադասարանական խմբակների կազմակերպման մոդել. այսպես ասած՝ ակումբային շարժման կամ կրթության շատ արդյունավետ մոդել. «Պատանի հետախույզ», «Պատանի լեռնագնաց» և այլ խմբակներ կամ ակումբներ, որոնց միջոցով հնարավորություն ենք ունենում ինտենսիվ ուսուցում և կարգապահություն ապահովելու: Ավելին, այստեղ ապահովվել է նաև միջառարկայական կապերի զարգացումը, ուսուցողական նյութերի պարզեցումը, արդիական ու կարևոր թեմաներ ներմուծելն ու ոչ պրոֆիլայիններից ձերբազատվելը, ինչպես նաև ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Հիմնական հանրակրթության պետական չափորոշչի անհատական կրթական արդյունքների պահանջներից. «... առողջ և անվտանգ ապրելակերպի արժեքի ձևավորում. մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակներում անհատական և կոլեկտիվ անվտանգ վարքագծի կանոնների յուրացում, տրանսպորտում և

ճանապարհներին վարքագծի կանոնները. ... կյանքի իրավիճակներում բնապահպանական կողմնորոշված ռեֆլեկտիվ-գնահատողական և գործնական գործունեության փորձի զարգացում» [11, էջ 6-7]:

Այսպիսով, սովորողների շրջանում արժեհամակարգի ձևավորումը, որոնց թվում կարևորագույններից են առողջությունն ու անվտանգությունը, հետևաբար՝ համապատասխան արժեքային կողմնորոշիչները, պետական կրթական չափորոշչում ամրագրված հատուկ կրթական խնդիր է: Այս խնդրի լուծման առանցքային դերը պատկանում է ՆԶՊ դասընթացին: Դպրոցականների կենսագործունեության անվտանգության ոլորտում կրթության նպատակը նրանց աշխարհայացքի, անվտանգության մշակույթի ձևավորումն է: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաև հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն):

Սովորողները պետք է տիրապետեն գիտելիքների և հմտությունների համալիրին, որոնք անհրաժեշտ են մի կողմից մարդու միջավայրում անվտանգ կենսագործունեության, մյուս կողմից՝ անվտանգ և հարմարավետ միջավայր ստեղծելու համար:

Քանի որ մարդն իր ողջ կյանքի ընթացքում է առնչվում վտանգի հետ, իսկ վտանգների շրջանակը և դրանց բնույթը, տարիքից և գործունեության տեսակից կախված, անընդհատ ընդլայնվում և փոփոխվում է, ապա կրթությունը պետք է լինի շարունակական և առաջանցիկ այն վտանգներից, որին բախվում է մարդը:

Կրթության շարունակականության ներքո պետք է հասկանալ, որ այն պետք է ներառվի մարդու դաստիարակության և կրթության բոլոր մակարդակներում:

Անդրադառնանք հիմնական դպրոցի աշակերտների որոշ առանձնահատկություններին: Այս ժամանակահատվածում դպրոցականներին բնորոշ է ֆիզիկական անհամաչափ զարգացումը: Սեռահասունացման հետ կապված պրոցեսները գերիշխում են արգելակման գործընթացների վրա, ուստի ՆԶՊ ուսուցիչը պետք է ավելի ուշադիր հետևի դասարանում կարգապահությանը: Միջին աշակերտի ընկալումը երբեմն առանձնանում է նրբությամբ ու խորությամբ, երբեմն էլ աչքի է ընկնում իր մակերեսայնությամբ: Հիշողությունն ու ուշադրությունը դառնում են ավելի կազմակերպված և կառավարելի գործընթացներ: Հետաքրքիր դասերն ու առաջադրանքները շատ գրավիչ են 5-7-րդ դասարանների աշակերտների համար, այնպես որ պետք է ուշադիր ընտրել ուսումնական

նյութը, օգտագործել ուսուցման փուլին և նպատակներին համարժեք մանկավարժական տեխնոլոգիաներ և մեթոդներ:

Այս տարիքում աշակերտը կուրորեն չի ապավինում ուսուցչի կամ դասագրքի հեղինակությանը, նա ձգտում է ունենալ իր կարծիքը, հակված է վեճերի և առարկությունների, ինչը նպատակահարմար է դարձնում խնդրահարույց հարցերն ու իրավիճակային առաջադրանքները ներառել դասի կառուցվածքում [2, 9]:

Հիմնական դպրոցի սովորողների բարոյական իդեալներն ու համոզմունքները ձևավորվում են տարբեր գործոնների ազդեցության տակ և, հետևաբար, շատ բազմազան են: Օրինակ, տղաները հակված են որպես կուռք ընտրել ուժեղ, խիզախ, համարձակ մարդկանց: Ուստի այս տարիքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հայրենասիրական ուղղվածությամբ միջոցառումներին, որպեսզի կուռքեր դառնան դրական անհատականությունները, այլ ոչ թե գրքերից ու ֆիլմերից՝ ծովահենները:

Բարոյահայրենասիրական դաստիարակությունը դպրոցական դաստիարակության կարևորագույն հանձնառության խնդիրներից է: Այն պետք է ներթափանցի կրթության և դպրոցական առարկաների բոլոր մակարդակները:

Որպես անձի դաստիարակության միջոց՝ սովորողներին ծանոթացնել զորահրամանատարների սխրագործություններին ու կենսագրությանը:

Կենսագրական նյութը պետք է կապված լինի կոնկրետ դասանյութի հետ, ներառվի ընթացիկ նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանն հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն զորականը, ինչպես են նրա սխրագործությունները կամ ճակատամարտերը ծառայում հայրենիքի պաշտպանությանը: Կենսագրական նյութը պետք է խթանի ուսումնական բարդ նյութի յուրացումը: Այս դեպքում նոր նյութի մատուցումը պետք է սկսվի զորականի մարտավարական տաղանդը, նպատակին հասնելու նրա հնարամտությունն ու համառությունը ցույց տվող անջնջելի, հուզականորեն հագեցած օրինակով: Կարևոր է սովորողներին ծանոթացնել զորականի մտածողության ոճին, մարտավարական հաշվարկները զինվորների մարտունակությանն ու անվտանգությանը ծառայեցնելու նրանց ձգտմանը, նրանց հայրենասիրությանն ու նվիրումին:

ՆԶՊ դասընթացը, գրականության և պատմության հետ մեկտեղ, առանձնահատուկ դեր է խաղում բարոյական և հայրենասիրական դաստիարակության գործում: Հայրենասիրությունը դա սեր է հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ և պատրաստակամություն՝ անհրաժեշտության դեպքում, զոհաբերելու սեփական առողջությունն ու, նույնիսկ, կյանքը՝ հանուն նրա բարօրության: Բայց ցանկացած զոհաբերություն, ցանկացած ռիսկ

պետք է շահադրդված ու նպատակաուղղված (մոտիվացված) լինի: Ռիսկի գիտակցականության և շահադրդվածության/նպատակաուղղվածության (մոտիվացվածության), սեփական և շրջապատող մարդկանց, իր ու նրանց շրջակա միջավայրի անվտանգության հոգատարություն, անվտանգ սարքավորումներ և բարենպաստ միջավայր ստեղծելու անհրաժեշտությունն հասկանալու դաստիարակումը՝ ամենօրյա հայրենասիրություն է, որը ձևավորվում է ՆԶՊ դասերին՝ կենսագործունեության անվտանգությունն ուսումնասիրելիս:

Հիմնարար մարտական տեսությունների և գիտափորձերի, հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ պետք է՝

1. ձևավորել պատկերացումներ անձի բարոյական հիմքերի առաջնահերթության մասին,
2. դրվի սովորողների ռազմահայրենասիրական ֆիզիկական ու հոգևոր դաստիարակության հիմքերը,
3. զարգացնել հուզական արժեքային մտածողություն,
4. զարգացնել քննախույզ մտածողություն,
5. դաստիարակել քաղաքացի, հումանիստ և խաղաղության պայքարի մարտիկ: կոլեկտիվիզմի զգացում, կարգապահություն:

ՆԶՊ դասերին պետք է ձևավորել զորական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն:

Հարկ է նշել, որ ՆԶՊ դասընթացներում դպրոցականների հայրենասիրական դաստիարակության խնդիրները, ինչպես նաև նրանց անհատական մոտիվացիոն ոլորտի ձևավորման և զարգացման այլ հարցեր (առաջին հերթին՝ առողջության և անվտանգության նկատմամբ արժեքային վերաբերմունքը) հանդիսանում են մանկավարժական կրթության ապագա բակալավրերի և մագիստրոսների, ապագա սպաների ու հայրենիքի պաշտպանների մասնագիտական վերապատրաստման կարևոր ու անբաժանելի մասը «Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության» ծրագրով [1, 7]:

Նկատենք նաև, որ հանրակրթական պետական չափորոշիչը սահմանում է «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկան որպես դպրոցում սովորելու պարտադիր առարկա:

«ՆԶՊ»-ն, որպես առանձին/ինքնուրույն առարկա վերացնելու և դրա բովանդակության տարրերը, որպես առանձին ուսումնասիրվող հարցեր, այլ առարկաների (ֆի-

զիկա, քիմիա, կենսաբանություն և այլն) փոխանցելու փորձերը անհիմն են և վնասակար: Այս դեպքում անվտանգության, հայրենիքի պաշտպանության պատրաստականության մշակույթի ձևավորման արդյունավետությունը ցածր կլինի, մարդն ընդհանուր պատկերացում չի ունենա շրջակա միջավայրի վտանգների, վտանգների ձևավորման և դրսևորման ընդհանուր օրինաչափությունների, կենսատարածքի պաշտպանության և ապահովության կազմակերպման մեթոդների մասին:

Անվտանգության խնդիրների ուսումնասիրման առանձին դպրոցական դասընթացների ծրագրերի ներդրումը պե՞տք է լինի, բայց որպես բովանդակություն, որն ուղղված է նպատակին հասնելու համար՝ սովորողների շրջանում անվտանգության մշակույթի ձևավորումը [8]:

Այսպիսով, ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը նպաստում է մետաառարկայական և անձնական կրթական արդյունքների ձեռքբերմանը, ներառյալ այնպիսի նշանակալի անհատական արդյունք, ինչպիսին են սովորողի արժեքային կողմնորոշիչները:

Ներառական կրթությունը «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակում կազմակերպվում է՝ ելնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների շահերից, ֆիզիկական և մտավոր ընդունակություններից ու կարողություններից:

Իրականացված հետազոտությունում կարևորվել է նաև միջառարկայական կապերի զարգացումը, ուսուցողական նյութերի պարզեցումը, արդիական ու կարևոր թեմաներ ներմուծելն ու ոչ պրոֆիլայիններից ձերբազատվելը, ինչպես նաև ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Ժամանակակից պատերազմները մեծ նշանակություն են տալիս գերճշգրիտ միջոցներին, մարտական ռոբոտներին, կապի և տեղեկատվության ժամանակակից համակարգերին, ինֆորմացիոն-հոգեբանական միջոցառումներին:

ՆԶՊ դասերի պռակտիկ (գործնական/կիրառական) ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում (կենցաղ, էկոլոգիա, առողջության պահպանում, շրջակա միջավայրի պահպանում, անվտանգության տեխնիկա և այլն) օգտագործելու կարողություն:

Այսպիսով, ՆԶՊ դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա ՝ որպես զորականության գործառության որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների ընդգրկունությունը, խոր համոզմունքով և հուզականորեն հագե-

ցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն ՆԶՊ ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը:

Ֆիզիկական կուլտուրա, ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն ուսումնական բնագավառը կարևոր նշանակություն ունի հայրենասիրական դաստիարակության համար, այն ապահովում է ֆիզիկական դաստիարակության, առողջության բարելավման և ռազմարվեստի հիմունքների իմացությունը, սովորողների այնպիսի կարողությունների և հմտությունների ձեռքբերումը, որոնք զարգացնում են մկանային ուժ, արագաշարժություն, ճկունություն, շարժումների կոորդինացիա, դիմացկունություն, հավասարակշռություն, ճարպկություն, դիպուկություն, ինչպես նաև տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշման և համարժեք քայլերի կատարման ընդունակություններ:

Եզրակացություն. Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Առաջարկություններ.

1. **Սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա ներգործող հանգամանքները՝ հեռուստատեսություն, համացանց ու սոցկայքեր, միջավայր, գոնե, վերլուծվեն-վնասազերծվեն ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում:**
2. Հայրենիքի պաշտպանությանը նվիրվելու պատրաստակամության ձևավորում՝ «Հայրենասիրություն, անձնվիրում կամ անձի նվիրաբերում, ...հանուն, քաջություն կամ արիություն, անձնուրացություն, ընկերասիրություն, փոխօգնություն» արժեքների սահմանմանը և «Հայրենասիրությունը գաղափարախոսությո՞ն թե մոտիվացիա», «Հանուն հայրենիքի ապրել թե մեռնել» հարցերին պատասխանելուն նպատակաուղղված թեմատիկ զրույց-քննարկումների, բանավեճերի իրականացմամբ:
3. Գտնել Հայաստանում հանրակրթության իրավիճակի բարելավմանը նպաստող մասնակցության ձևը:
4. Կարգաբերել ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության օրենսդրական դաշտը:
5. Մասնագիտական զարգացման ներդպրոցական մշակույթ
6. Անհրաժեշտ է հիմնական շեշտը դնել գիտելիքների կիրառման վրա:
7. Իրականացնել ՆԶՊ ցուցանիշների համակարգային հավաքագրում և վերլուծություն՝ հասկանալով, թե որ ցուցանիշներով է ՀՀ հանրակրթությունն առաջընթաց կամ հետընթաց արձանագրել:

8. Սահմանել հանրակրթության առաջնահերթ ցուցանիշներ և ջանքերն ուղղորդել դրանց բարելավման ուղղությամբ:

9. Ուսուցիչների աշխատանքի ընդունման, ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացում թեստերի, փաստթղթերի փոխարեն առաջնային համարել գործնական հմտությունները (դաս պլանավորելը, դաս անցկացնելը, երեխաների հետ հաղորդակցվելու մշակույթը):

10. Բացահայտել և համախմբել վերջին տարիների մասնագիտական զարգացման ծրագրերի արդյունքում դասարաններում հաջողության հասած ուսուցիչներին և տարածել նրանց փորձը:

11. Վերապատրաստման դասընթացներից զատ կիրառել մասնագիտական զարգացման դպրոցի վրա հիմնվող ձևեր (Դասերի դիտարկման այցեր այլ դպրոցներ, դասերի խմբային վերլուծություններ, փորձի փոխանակման կոնֆերանսներ):

Օգտագործված գրականության ցանկ.

1. Սերեբրյակով, Ռ. Վ. Կյանքի անվտանգության դասընթացի դերը միջնակարգ դպրո-ցի աշակերտների արժեքային կողմնորոշումների զարգացման գործում / Ռ. Վ. Սերեբրյակով. - Տեքստը՝ անմիջական // Երիտասարդ գիտնական. - 2015. - Թիվ 6.4 (86.4). – էջ՝ 110-112. — URL՝ https://moluch.ru/archive/86/16454/ (մուտքի ամսաթիվ՝ 07/27/2022):

2. «Հանրակրթության մասին», «Պաշտպանության մասին», «Զինապարտության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներն ու «Հանրակրթական պետական կրթակարգը», «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»:

3. ՀՀ ԿԳՄՍՆ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագիր (8-12-րդ դասարաններ) նախագիծ. http://escs.am/files/files/2021-02-05/514af6716ca27e58e91fc5e8c0e3507f.pdf ,

4. ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 17-ի N 900-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարություն 11 հունիսի 2009 թվականի N 649-Ն որոշումը https://www.arlis.am/documentview.aspx?docid=52170

5. Հանրային քննարկման է ներկայացվել ՆԶՊ առարկայի չափորոշիչը **https://escs.am/am/news/7884**

6. Սերոբ Խաչատրյան, Սիլվա Պետրոսյան, Գայանե Թերզյան «Ուսուցիչների մասնա-գիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ հայաստա-նում հանրակրթության բարեփոխումների համատեքստում», «Բարև» գիտակըրթական ՀԿ. 2013: https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf ,
7. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպ-լեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ: 2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
8. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
9. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с. – 401 – Формирование системы ценностей Формирование системы ценностей учащихся в общеобразовательном учебном заведении учащихся в общеобразовательном учебном заведении
10. Абрамова В.Ю. Особенности курса методики обучения и воспитания безопасности жизнедеятельности //Актуальные проблемы гуманитарных и естественных наук. – 2014. - №3-2. – С.162-165.
11. Киселева Э.М. Методические аспекты обучения безопасности жизнедеятельности на основе деятельностного подхода //Актуальные проблемы гуманитарных и естественных наук. – 2014. - №12-2. – С.72-75.
12. Костецкая Г.А. Формирование культуры безопасности жизнедеятельности школьника: ценностно-ориентационный аспект проблемы /Детство и социокультурная прогностика: Материалы XVI Международной конференции «Ребенок в современном мире. Детство и социокультурная прогностика». – СПб.: Изд-во Политехн. ун-та, 2009. – С. 177-182.
13. Леонтьев А.Н. Деятельность. Сознание. Личность. - М.: Академия, 2005.- 352с.
14. Силакова О.В. Использование межпредметного подхода в процессе изучения курса «Основы безопасности жизнедеятельности» //Метаметодика как перспективное направление развития предметных методик обучения /РГПУ им.А.И.Герцена; науч. ред. Е.П.Суворов. – СПб.: Статус, 2011. – С.215-219.